

աշխատանքէն աւելի կը մաշեցընէ :

Ո՞հս գործածուած բանալին փայ. լուն կ'ըլլայ :

Ի՞ելի դիւրին է զսպել նախ և առաջ եկած փափաքը՝ քան թէ անոր ետեւէն եկածները :

Դիտութիւնը ուսումնասիրին համար է . հարստութիւնը աշխատողին համար , իշխանութիւնը քաջութեան համար , արքայութիւն՝ առաքինուն :

Փորձառութեան տուած համարները սուղ սուղ կը գնուին , բայց անմիտ մարդկանց շատ հարկաւոր են :

Հպարտին նախաձաշիկը առատութիւն է , կէսօրուան կերակուրը աղքատութիւն , իրիկուանը խաղքութիւն :

ԶՈՒՏՐՑԱԼԻ ԴԻՊՈՒԱՆՆԵՐ

Ի՞նչորդէ Հարյապրութիւն :

ԳԱԵՐՄԱՆԻԱՅԻ վերջի պատերազմներէն մէկուն մէջ զինուորի մը երկութեան ալուումքէ մը կը զարնուին կ'իշնան . զօրապետը կը հանէ ասոր վեց ֆուանքնոց ստակ մը կուտայ : “ Ոյողութիւն կ'ընես , կ'ըսէ զինուորը . հրամանքդ կարծես որ երկու ձեռնոց է իմկորսունցուցածս , :

Ը ՊԵՐՔՐՈՒԹԻՒՆ :

ԽՐԲՈՐ Կափոլէն Ի՞սթերիցի պատերազմը լմբնցուց ու յաղթանակով ետ կը դառնար , միտալ մը ընծայեցին իրեն՝ որուն մէկ կողմը Կափոլէնին գլուխը փորած էր , մէկալ կողմը արծիւ մը որ ինձ՝ մը խղդելու վրայ է : “ Ի՞սինչ պիտի ըլլայ , ըսաւ Կափոլէն : Ը ողոքորթ իշխանն ալ պատասխան տուաւ . “ Տէր արքայ , ըսաւ . ասիկայ Դաղղիացւոց արծիւն է որ Ի՞նգղիացւոց ինձը խղդելու վրայ է : — Ա ատ շողոքորթ , կանչեց վեհանձնան կայսրը . ինչպէս կը համարձա-

կիս ըսելու թէ Դաղղիացւոց արծիւը Ի՞նգղիացւոց ինձը խղդելու վրայ է . չես տեսներ որ Ի՞նգղիացւոց ձեռքէն՝ ես դեռ և ոչ պատիկ նաւակ մը կրցեր եմ ծովը իջեցընել : Ը հւտ , հալեցընել տուր ատ միտալը . մէյմըն ալ այդպիսի բան չտեսնեմ , : Դեղեցիկ օրինակ վեհանձն մարդկանց , և զօրաւոր խրատ անխելք շողոքորթաց :

Զ Ա Յ Ի Ր Ա Լ Կ այցելութիւն :

Ո Ա Ր Դ Ո Ւ Ն մէկը անդադար կ'երթայ եղեր իր ճանչւորներէն մէկուն գլուխը ցաւցընելու : Ո՞էկ առաւօտ մը նորէն որ կուգայ , մէկալը իր ծառային ձեռքովը ըսել կուտայ թէ տէրս դեռ անկողինն է : “ Օ են ջխտար , կ'ըսէ մէկալը , կը սպասեմոր ելլէ : — Գնա զուրցէ որ հիւանդեմ , կ'ըսէ տէրը : — Իսէ որ դեղ մը կ'ընեմ իրեն : — Օ ուրցէ որ ծանը եմ : — Վ ի ս ո ս . ուրեմն գոնէ վերջի բարես տամ իրեն : — Գնա ըսէ որ մեռայ : — Գննէ ափ մը հող ձգեմ վրան , : Շար ըլլար , պէտք կ'ըլլայ որ ներս մտնէ ան ձանձրալի մարդը :

Ի ՞ Ե Լ Ր Ր Դ Պ Պ Ա Հ Պ Ո Ւ Ն Ի Մ :

Խ Ի Ր Ո Պ Ա Յ Ի շատ կողմերը անխելք աւելորդապաշտութիւն մը կայ որ տասուիրեք հոգւով ոչ երեք սեղան կը նստին , իբր թէ ան տասուիրեքին մէկը կը մեռնի կ'ըսեն :

Ո Պ Ո Ա Ն քաղաքին գլխաւոր իշխաններէն մէկը կը տեսնէ որ մը որ սեղանին վրայ տասուիրեք հոգի են , Ճար ըլլար՝ նստիր կերակուրի՝ ինչուան որ մէկ հոգի մըն ալ չըերեն չնստեցընեն , որպէս զի տասնըցորս ըլլան : Ի՞ն ատեն սիրտը կը հանգչի , կընստի կ'ուտէ . բայց սեղանէն ելելուն պէս՝ կաթուած մը կ'իջնայ , յանկարծակի կ'իջնայ կը մեռնի :